

Տարեկան գինը 10 ըուբլի. կէս տարվանը 6 ըուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

ԹԻՖԼԻՍՈՒՄ գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.

Ukr ზნუჭი. Тифლისь, Редакція „Мшакъ“.
 ჴაიფ Tiflis, Rédaction „Mschak“.

St. Elizabeth N 253.

176

Յնքագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն բնդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ:

St. Elizabeth No 253

ՀԻՄՆԱԳԻՒՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷՒ

Կիրակի, օգոստոսի 1-ին

በፊት ሆኖ ህዲህ ጥሩ ጭህርቱ ህዲህ ህዲህ

մահվան տարելիցը լինելով՝ պատարագ կը մատուցվի 30օրվանը և մատուցում և ազատ հոգեհանգիստ կը կատարվի հանգուցեալի գերեզմանի վրա, որի մասին հանգուցեալի ալրին՝ Վարդուհի Թարևանեանը իր զաւակներին հետ յայտում է ազգականներին և բարեկամներին: Պատարագի սկիզբը ժամը 10½-ն է: 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լաօհանի շրջանը.—Ներքին ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
Քօրհրայի դէմ Մի համեստ առաջարկ Արքե-
պոսիւնը ձեր գիւղերում. Նամակ Գանձակից
Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
Պատրիարքի շուրջը.—ՀեռԱ Գիթնէր — ՅԱՅ.
ՏԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ԼԱՕԵԱՆԻ ՇՐՋԱՆԸ

II

«Մշակի») ներկայ համարում զետեղում ենք զեռգրական մի քարտեզ գաղափար տալու համար պատերազմական բեմիներկայ պիճակի մասին:

Հեռագրական գործակալութեան երեկվա հեռագրի համաձայն՝ եապօնականն ոյժերը դասաւորվել են Լաօեանի շուրջը հետևեալ կերպով:

Ութ հապճիական զորաբաժին, որոն-
ցից իւրաքանչիւրը պարունակում է
20,000 հոգի զօրք, առաջ են շարժվում

Դալինի այս լեռնանցքը չը պէտք է
խառնել այն Դալինի լեռնանցքի հետ,
որի մասին յիշել ենք առաջներում, հա-
րաւային դիրքերի մասին խօսելու փա-
մանակ: Ներկայ լեռնանցքը գտնվում է
մի մեծ լեռնաշղթայի վրա և բնկած է
Մուկդէնից դէպի արևելք Սինցզի-
նիի և Սեհոսւորի ճանապարհների
վրա:

Մինչդիպում իր և Յզեանյանի շրջակայ-
քում սկսել են ընդհարվել կռուող կողմե-
րի զորքերը: Յուլիսի 22-ին ուսանական
զորքը դիմադրեց հայաճացիներին և գրա-
ւեց Ղալվինդուշանի լեռնանցքը, (որի
մոտ կան ոսկեհանքեր):

Մենք առ այժմ միակ աղբիւր այլ
անցքերի համար ունենք հեռագիրները:
Եւ եղած հեռագիրները պարզ ըմբռնելու
համար ներկայացնում ենք համառոտ գը-
ծարգրական քաղաւթ, որտեղ նշանակված
են յիշյաժ ցարտարգոյրական նստունները:

—Միւս կողմից Թիֆլիսի գաւառի սահմանաւանդութիւնը յանձնաժողովը մօտ օրերու դուրս կը գայ իւր շրջանի բոլոր գիւղերն ու քաղաքները մինչ քաղու, զիւղական հաստիքներին ու քաղաքներին իրանց բնակավայրերն առողջացնելու միջոցն ցոյց տալու, եւ խօսքով՝ նրանց գործնականապէս ցոյց տալու խօրհայի մտաւն արգելելու համար, եւ կամ զէպրով՝ նրա զէմ մարտնչական հմարները:

—Այսպեսլաբերի ձայնաուրները ժողովը լսելով գործադիր սանիտարական յանձնաժողովի զեկեցումը խորհրայի մուտքն արգելելու համար ձեռնադրվելի միջոցները մասին, միաձայն որոշեց այդ նպատակին համար 1) քաղաքային սանիտարական գործադիր յանձնաժողովի տրամադրութեան տակ դնել 200 բ. միլիսանդնիչ միջոցները համար և 2) ինչպէս թիֆլիսի նահանգապետին դնել նոյն յանձնաժողովի տրամադրութեան տակ 2,000 բունդը քաղաքային պահեստի գումարները՝ առանց վերադարձնելու պայմանին, որպէսզի այդ գումարը գործադրի խորհրայի ներմուծութեան և նրա տարածման ղէպ կռելու համար:

— Բագուր ծովային բժշկական հոկոլորթեան
կենտրոնական վարչութիւնը առաջարկել է բո-
լոր ռուսական ակիբի մօտ լոյացող մար-
նաւերին, որոնք ռուսական Աստաթայից ե-
կէնթորանից ձամբորդներն են բերում—պա-
հանջել բոլոր ձամբորդները անցադղերը Այլը-
բանը պահանջվում է նրա համար, որ Պարս-
կաստանից ձամբորդներն չը կարողանան գաղ-
տնի, առանց բժշկական վերանայնորթեան
մտնել Ռուսաստան։ Անցադղը չունեցող, կառ-
կածելի է կամ պարսկական անցադրով մար-
դիկ, որոնց մասին կարելի է հնիթելիկ, որ
նոր են դուրս եկել Պարսկաստանից—այդդի-
սիների հետ կը վարվին ամենայն խստու-
թեամբ ալսինքն ախտահանութեան կենիթար-
կան նրա ստացվածքը է իրան էլ բազանիսով
կենցաղայնան, ճիշտ այնպէս, ինչպէս Պարս-
կաստանից եկած անձերի հետ։

Անդրկապաղան շրջանի կառավարչապետ
գեներալ-մայոր Զեքենսկին հրամանագրել է
իւր շրջանի ուսերկանութեան և բժիշկներին ա-
ռանձին ուշադրութիւն դարձնել արտաքինոց-
ների, սպանդանոցների, ներկաբանների, աղյ-
քի գործարանների, մոմի և սապօնի գործա-
րանների մաքրութեան վրա, նոյնպէս և թոյլ
չը տալ ծակաւոր խակ մըգեր: Անդողջ Սա-
մարղանդ քաղաքը սանիտարական տեսակետից
բաժանւած է 3 վերահսկողութեան մասերի:

ՄԻ ՀԱՄԵՍՏ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Իւրաքանչիւր անգամ ուսումնական տարին վերջնաւաւուց յետոյ՝ բազմաթիւ հայ երիտաւարներ և օրիորդներ, ծանօթ-անծանօթ, բերանացի և գրաւոր զանազան բազաւներից սկսած Թիֆլիսից, Գանձակից, Նրեանից, Բազուից և այլն, դիմում են ինձ՝ յայտնելու թէ պալլուն կերպով աւարտել են իրանց ուսումը, ստացել են հաստեւութեան վկայականներ, ուսանք աւելացնում են, թէ ստացել են և ոսկէ, արծաթէ մեդալներ,—բայց նիւթական միջոցներից զուրկ լինելով և ոչ մի կողմից օգնութեան յոյս չունենալով, որով կարողանան իրբանց ուսումը վերջացնել բարձրագոյն դպրոցներում, քնացել են շուարած և խնդրում են ինձ գտնել բարեբարներ Թիֆլիսում իմ ծխականների մէջ, կամ միջնորդի դեր ստանձնել դիմելու Թիֆլիսի մեր հայուստներին, որոնք յայտնի են բարեբար անւնեով և խնդրել ընտելանելու նրանց որդեգիր:

Սյա դիմողներին մեջ կան այնպիսիները, ու
րոնք արդեն ուսանում են համալսարանների
II, III և IV կուրսերում: Շյղ գրութիւնները
առանց արտապիւրո անկարելի է կարդալ:
Մէկը գրում է, թէ հայրը յանկարծ վախ-
ճանվել է, տունը մնացել է անտէր անտիրա-
կան, օրվան հացի կրօտ, այլ ևս տանի-
քածական չէ ստանում, ինքը պարտքի մէջ
լորել է, անտանելի դրութեան մէջ է, ուս-


ման վարձը տուած չէ, համարաբարն չէ յա-
ճախուած և եթէ որ և է կողմից օգնութիւն չը-
լինի, ստիպւած պէտք է կիսատ թողնէ հա-
մարաբարն և հետանայ, իսկ այդ բարձր նրա
համար մօտ է: Երկրորդը գրուած է, թէ հայրը
կենդանացել է, միջոց չունի այլ ևս շարունա-
կել տալու իր ուսումը, գրուած է կիսատ թող-
նել և վերագումար: Երրորդը դանգաժուած է,
թէ իր բարեբարը այլ ևս փող չէ ուղարկուել,
իր խօսքը յետ է վերցրել և մի ուրիշը, թէ
գործելը վատ են գնում և գրուած է իր զրկի-
վարքը տեսնել, նա այլ ևս կարող չէ նրան
օգնել, փող ուղարկուել և այլն:

Այս նամակների մէջ ուսմը էլ զանաւար-
վում են, թէ իրանը անձամբ կամ նամակնե-
րով դիմել են մեր մի քանի հարուստներին,
բայց մէկի կողմից բացատրեւին են ստացել,
միւսը տանից դուրս է արել ծառայի ձեռքով,
երբորդ էլ չէ ընդունել, չէրորդէլ թուղթի կար-
գաւուց յետոյ պատռել, դէն է շարքեւել և մի
լատ էլ հայոցիւ է այլն: Այս դիմողների մէջ
կան և շատ հայ օրիորդներ, որոնք տաւրտե-
լով ուսման ընթացքը՝ նմանապէս փախապու-
ն են զարժրապոյն կրթութիւնն ստանալ, բայց
միջոց չունեն: Սընացից մէկը դուռն է, թէ
դիմել է մի բարձրարիւ և ստացել է պատառ-
ւան, թէ սկզբունքով նա դէմ է կանանց
բարձրագոյն կրթութեան, ուստի և չէ կարող
օքնել: Ձեռն հաշուած ուսումնական տարւոյ
ընթացքում և այն բազմաթիւ աղանդիւն և
օրիորդների աղիողորմ վայն ու ագերանքը,
որով դիմում են ինձ, թէ ուսումնաբանից,
գիմնապիլայից հետացրել են ինձ ուսման վճարը
չէ ներկայացնելու համար և խնդրում են օգ-
նել:

Եւ պէտք է իմանալ, որ այս ուսումնասնա-
բանս անձինք, մասնաւոր թարգմադրոյն կրթու-
թիւն ստացողները, իրանց գրութիւններէն մէկ
ստալարկում են օգնութիւն անել փոխարի-
նաբար, այն պայմանով, որ աւարտելուց յի-
ստով վերադարձնեն տոկոսով, մինչեւ անդամ
հաստաձայն են ամհնաձայն պայմաններ ըն-
դունել, սխալմ թէ հնարաւորութիւն, սխալոց
տրվի նրանք իրանց ուսումը շարունակել,
վերջացնել—իրանց փափագին հասնել:

Այսպիսի արտասուաւի խնդիրները կարգաւորլով մտադ ֆուսմ է շուտարած, ընկնում է դաւնազան մտածածնքների մէջ, այս ու այն կողմը մտաւոր արշաւանքներ է անում, մի միջոց գտնելու աշխարհներին մի կիւղօ օգնելու հումար, բայց ոչինչ հետեւանքի է հասնում: Մարդկանց սրտերը, կարծես, ջար լինի դարձած, չազդում նրանց և ոչ մի խօսք, կարեկցական զգացմունքը վերացել է կարծես: Ապա վրդովմած բացարձակում եւ. Չէ որ սրտանք են մեր յոյսները, մեր կարծածնքները, մեզ միտարկողները, մեզ ազգային կեանքի շարունակողները, ուրեմն ի՞նչպէս կարելի է անտես առնել արանց խնդիրը, չը մտածել և չը մտնել նըրանց զբոլթեան մէջ, եթէ կամենում ենք, որ մեր ազգը առաջադիմէ, ժամանակի հետ առաջ ընթանայ և լուսաւորեալ ազգերէ շարքը մտնի Միթէ սա դժուար դործ է, անկեղծ ինչի բան է մի ազգի, մի ժողովրդի համար: Կովկասը հայտնիեան կենտրոնն է, ուր գտնվում են ժաւաւորացէն և բարոյացէն կրթված, զարգացած մարդիկ, երիտասարդութիւն, հարուստներ, մինչև անգամ միլիոնատէրեր: Ի՞նչ են շինում սրանք, միթէ հարուստները և զին կեանքը աւրաւոր անզգայ է դարձրել նրանց սիրտը, որ այս խեղճերի խնդիրը, աւերասանքը չեն կարողանում լսել: Միթէ բարիք անհեղ, բարի անուն թողնելու արամաւորի մարդէի խաղաղ վերացել են մեր միջկը: Եւ վերջապէս միթէ կարելի է այդքան անուարարքի լինել զէպի կրթական գործը: Արարարե ունենք մի երկու բարեբար, որոնք որով չափով մտնն են հանում իրանց ունեցածից այդ նպատակի համար, բայց սրտնք էլ իտակ՝ անկարող են լինում բոլորին բուսարարութիւնն առլ և երկրորդ մեծ մասամբ սրանք արած ճարեարարութիւնը կատարվում է իրանց

l u o t u l p t o h r g f



ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՕԼԵՐԱՑԻ ԴԷՄ

Յուլիսի 30-ին Թիֆլիսի սանիտարական-գործադիր յանձնաժողովը պ. Նահանգապետի նախագահությանը նիստ ունեցավ: Խորհրդակցությունն ասարկան էր Կուր գետի աջ բազուկը, այդ բարձրահատուկեան բունը կազմող ջրի հունը, որը և նշանում է շրջակայ բնակիչների առողջութեանը և քաղաքից ահագին տարածութեան հող խլում: Որոշեցին լցնել այդ փոսը, ծածկել բոլորովին և այդտեղ քաղցիղ բաղաքային կոյուղիներին համար գոնէ մի քանի տասնակուսոր ընդհանուր կոյուղի շինել: Արհնչե իսկական գիծը: Այդ հարցը կը վնասեան լուծման համար բաղաքային խորհուրդը նիստ է կայացնելու ներկայ օգոստոսի 4-ին: Պ. Նահանգապետը և սանիտարական-գործադիր յանձնաժողովի անդամները միասին՝ նիստից գոնէ՝ գնացին դիտելու Թիֆլիսի այդ աղտոտողութիւնների բունը:

Լաօիսէ գետի հոսանքով դէպի վեր: Հինգ
զօրաբաժին սպառնում են ուսուց դիր-
քերին արևելքից, Անալինի մօտ: Երկու
զօրաբաժին էլ շարժվում են Տայզզիխէ
գետի ափերով: Այդ գետի վրա է գտնի-
վում և Լաօսեան քաղաքը:

Տապալանալիները աշխատում են անցնել Տալիզիլի գետը: Նրանց փորձը անցնել Բեռախիսու և Միցցի կետերում աջողութիւն չունեցաւ: Գետը երկու տեղ ունի ոռորով անցնելու համար, բայց այդ տեղերը կամ հունները բուսաց վաշտերի հսկողութեան տակ են:

Անշահանշոռան կայարանի մօտ, որ վանկում է կառնանի և Ուայշէնի միջև, զինքն է յուլիսի 27-ը հանգստություն էր տիրում: Իսկ այդ տրվանից սկսվեց ընդարձակում ռուսական և եռապետական զորքերի միջև: Եապոնացիները արևելքից սկսում են իենարոնանալ Մայմացզի քաղաքում և այնպիսից պաարառառում են շարժվել դեպի Դայկին իենանգոր:

բարեկամները շրջանում: Ուրեմն ի՞նչ անել: Եւ առաջարկում եմ հաւաքական, ընկերական ոյժով, օգնութեամբ, նուէրներով անել այդ: Կազմել մի գրամատչելի կամաւոր նուէրներէ, կտակներէ, որ կարող է հետզհետեւ աճել և օգնել այդ երիտասարդներին: Հաւաքական ոյժը մեծ է և շատ բան կարող է անել, հարկաւոր են նախաձեռնողները միայն: Այսպէս ուրեմն հարկաւոր է կազմել մի ընկերութիւն, ինչ անուն կամենում էք տուէր, ինչ հիմունքներով վրա կամենում էք դրեցէք, կազմակերպեցէք, միայն թէ դրա միակ նպատակը լինի միմիայն օգնել, միջոց տալ անխորաքար չքաւոր հոգաւորներին և ուսանողներին բարձրագոյն կրթութիւն ստանալու համար թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում:

Մեր այս համեստ առաջարկութիւնը օրվայ կարելոր խնդիրներից մէկն է և ամենքի սրտին մօտիկ. յուսով եմ, որ հայ ժողովուրդը մէջ արձագանք կը գտնէ: Հայ ժողովուրդը յայտնի է իր բարեգործութեամբ. դրան վկայ են մեր հազարաւոր վանքերը, եկեղեցիները և դասական բարեգործական հաստատութիւնները, ուսումնարանները և այլն, և սրանց օգուտն մինչև այսօր առատօրէն նուիրած, կտակած գումարները և կալուածքները: Չեմ կարծում, որ մի քանի համագումարներ մարած լինէին հայի սրտի մէջ բարեգործական այդ կրակը—զգացմունքը, հայը եղել է և կը լինի միշտ բարեգործ, միայն այժմ առաջարկվում է նրան այսուհետև ևս առիթ ունենալ իր նուէրները մի աւելի կարևոր և սուրբ գործի համար. դա բարձրագոյն կրթութեան գործն է: Վանքերի և եկեղեցիների փոխարէն կենդանի տաճարներ պատրաստելու գործն է և դա այժմ շատ հարկաւոր է մեզ համար:

Այս գործում կարող են շատ օգնել և մեր հոգևոր հայրերը, մանաւանդ կրօնաւարները, որոնք ծանօթ են ուսանողութեան գործի հետ: Նրանք միշտ առիթներ ունեն իրանց ծխականների հետ խօսել, խորհուրդ տալ, յորդորել, յիշեցնել նուիրեալութիւններ անելու և կտակներ կազմելու ժամանակ: Մանաւանդ, կարող է պատահել, որ ոմանք հէնց իրանց հարցնեն խորհուրդ, թէ ի՞նչ բարեգործութիւններ կարելի է անել, փող, տուն, կրպակ, ալդի և այլն նուիրել, կտակել: Այս օրերս իմ ծխականներից մէկը կտակ կազմելու դիմեց ինձ խորհուրդ հարցնելով, թէ ի՞նչ բարե գործի համար կարելի է կտակել մի գումար: «Չբարձր հայ ուսանողների և ուսանողուհիների օգուտին, որով նրանք կարողանան բարձրագոյն կրթութիւն ստանալ» պատասխանեցի ես: Բացատրելով նրա օգնականութիւնը և կարելոր լինելը: Շնորհակալ եմ, տունս խորհուրդս սիրով ընդունեց և կտակի յօդուածներէ մէկում որոշվեց մի խոշոր գումար այդ նպատակի համար, որը և ինձ առիթ տուցեց այս տողերը գրելու:

Հաւատացած եմ, որ ամուրը, որի ձայնը գործը է, և ազդում է ժողովրդի վրա, կը դարձնէ իր լուրջ ուշադրութիւնը մեր առաջարկութեան վրա և ձայն կը բարձրացնէ ու լսել կը տալ, որ հայը այսուհետև աւելի պարտաւոր է իր բարեգործական զգացմունքը դրած դնել նոր սերունդի, վերև յիշված ուսման և կրթութեան համար:

Տէր-Եղիշ

ԱՐԲԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԳԻՒՂԵՐՈՒՄ

Գինեւորութիւնը մեզանում ժամանակակից մի ախտ է դարձնալ, որով վարակված են գլխաւորապէս տղամարդիկ: Խնամ է դառնալ ծերունին, հարբում է երիտասարդը, ալիօսիւն սիրահար է պատանին: Չարմանալի է այն, որ արեւելքի մեր մեր ժողովրդի *) համար անպատուաբեր բան չէ: Ծաղրվում է նա, ով ոգելից խմիչներն չէ գործածում. նրան կամ յիմար են համարում կամ ոչ-հայ, որովհետև «հայ-բրիտանիան» գոնէ գինի անպատճառ պէտք է խմէ:

Արդեօք ի՞նչի մէջ փնտռել դրա գլխաւոր պատճառը:

Կարելի էր կարծել գինեւորութեան մէջ, ինչպէս շատերն են ենթադրում, Բայց յայտնի է, որ առաջ էլ, երբ այստեղ այգիներ դեռ ևս չը կային և գինին այդքան էլ առատ չէր, արեւելքի մեր մեզանում սովորական էր և աւելի մեծ չափով:

Հաւանական է, որ այդ հիւանդութեան գլխաւոր պատճառը սովորութիւնն է, որ կա-

*) Ուստի վերին և ներքին Ազաների և մեր գիւղերի ընկերները մասին է, որոնք 1828 թ. Մարաղայից (Պարսկաստանում) են գաղթել:

Վաց-կամաց հաստատվելով, դարձել է մի անհրաժեշտութիւն: Մեզանում երբ երեսնան աչքեր բաց է անում, գինի, օղի և հարբած մարդիկ է տեսնում. էլ ի՞նչ դարմանք, որ ինքն ևս սիրէ դրանց և աշխատէ հետեւելու իր շուրջը թափված ալիօսիւն յաղթածներին:

Դրա վրա պէտք է աւելացնել և այն, որ շատ ծնողներ հէնց իրանք իրանց որդիներին, 2—3 տարեկանից սկսած, ստիպում են գինի, օղի գործածել: ասելով, եթէ հիմա խմեն, խմիչքից կը զզվեն և ապագայում արեւելքի չեն լինել:

Այստեղից պարզ երևում է, որ բոլորն էլ գիտեն, թէ գինին և առհասարակ միւս ոգելից ըմպելիքները քիչապար են, ուստի իրանց զաւակներին աշխատում են դրանցից հեռու պահել: Բացի դրանից ամենքի աչքերի առջև դեռ ևս կենդանի են այն խեղճերը, որոնք, մի-երկու տարի սրանից առաջ գինով խեղճվեցան:

Չը նայած այդ բոլորին, մեր գիւղացիները շարունակում են սիրել ալիօսիւն, որովհետև, ինչպէս ասացի, մանկութիւնից արդէն ընդունացել են նրան:

Արեւելքի մեզան, ի հարկէ, մասամբ էլ նպատակում են անգործութիւնն ու գինեւորութեանը, որովհետև նկատված է, որ ձմեռը, երբ գիւղացիք գործերից ազատ են և տան գինին առատ, արեւելքի խիստ շատ են լինում:

Մեր գիւղերում ո՞ր տունը և ո՞ր ժամին էլ որ ամենք, ի հարկէ, թէ յանձն չառնէր, որ գինին գլխից ամեն և փչացնէ շորերը—առանց «տաքանալու» դժուար կարողանաք դուրս պրծնել: Եթէ կերակրի կարգին պատրաստութիւն էլ չը լինի, առաջը կը դնեն մի գաւ (լուէյին) գինի, մի կտոր չոր հաց, եթէ սուրճ է, նաև ևս կտոր պանիր, իսկ եթէ պահլ՝ չոր հացի հետ կը լինի աղ և, որ հազուադէպ է, թթու դրած վարունգ:

Չը նայած, որ մեզանում շատ ընտանիքներ սեփական այգիներ ունեն, որոնցից 50—150 պուղ գինի է ստացվում, սակայն և այնպէս էլի ամեն ու կէս չանցած, կը տեսնէք կարասիները դատարկված և կողքի տուած: Շատ քիչ անհրաժեշտ այդ հագինք բանակութեամբ գինուց կարողանում են մինչև վարունգ հասցնել:

Ահա այդ է պատճառը, որ մեր փոքրիկ ժողովրդից 30 հոգուց աւելի մարդիկ Նախի-Ղանից և նրա շրջակայ գիւղերից գինի բերելով և ծախելով են պարագում: Նրանց տըները շարունակ լիքն են. մէկը մտնում, միւսը դուրս է գալիս. մի խմբին յաջորդում է միւսը:

Գինի ամենապատուաւոր ծերունիներն իսկ չեն քաշվում այնտեղ մտնելուց: Բակում, աթարի կտորի վրա նստած (թող ներքի ինձ պարզ արտայայտել) կամ, աւելի յաճախ, կանգնած, միայն աղ «մազայ» անելով, գինու կաւեր են, որ դատարկում են...

Մեր գիւղերում մի տարվայ ընթացքում խմիչքի համար 3—4 հազար ռուբլի փող է փչանում, որի կրկնապատիկն այս տարի դուրս կը գայ, որովհետև անցած ձմեռվայ ցրտերը մեր սեփական այգիները տարել են:

Արեւելքի մեզան հետեւան՝ ընտանիքների բայցայման, աղքատութեան, հիւանդութիւնների, կուրծների մասին աւելորդ եմ համարում յիշատակել, քանի որ ալիօսիւն գործիւնը բոլորին էլ բաժնի յայտնի է:

Բնական է, որ ամբողջ օրը կարանների մօտ բաքոսի երկրպագող ժողովուրդը ժամանակ չի ունենայ իր մտաւորի մասին մտածելու, ուրեմն կը մնայ միշտ տգէտ:

Վ. Ազա

ՆԱՄԱԿ ԳԱՅԱԿԻՑ

Յուլիսի 25-ին
Գինու գները օրէց օր ընկնում են. բոլորովին պահանջ չը կայ, գինի չէ արտահանվում և նա մնում է անվաճառ: Ի՞նչ կը լինի մի քաղաքի գրութիւնը, եթէ նրա արդիւնաբերութեան միակ ճիւղն անասելի ճգնաժամի ենթարկվի: Ո՞րք են մեր գինի գնողները, ապաւորողներ, մեր գինեւորութեանը—չը գիտենք, միայն այսքանը կասենք, որ Գանձակի գինու առևտուրը երբեք այսպիսի կրկնի տեսած չէ: Ցաւալի է, որ վերջին 1 ռուբլի 20 կօպ տիւրով վրա նստած գինին առաջարկվում է 50—60 կօպէկով, դարձնալ գնող չը կայ: Գինը օրէց օր ընկնում են, սակայն գնող չը կայ: Գինեւորութեան գինիները, որ համեմատաբար հայերի գինուց ստոր է, այժմ ծախում են 50—60 կօպ. վերջին, իւրաքանչիւր բան վերջին մի վերջին էլ քաղաք-բաշի տալով: Հայերը դեռ գները պահում են 1 ռուբլուց

մինչև 80 կօպ: Եւ ինչպէս պահանջներն, քանի որ ինչպէս գերմանացիներին, նոյնպէս հայերի վրա վերջինս նստում է 1 ռ. 40 կօպէկ, չեմ խօսում այնպիսիների մասին, որոնց վրա նստել է վերջինս մինչև անգամ 2 ռուբլի:

Այս տարի էլ անցեալ տարվայ նման այգիները առատ բերք են խոստանում. շնորհիւ նպատաւոր եղանակներով, այգիները ազատ մնացին միջոցի և օգիւտում տնաւեր հիւանդութիւններից:

Ինչպէս բժշկված, նոյնպէս չը բժշկված այգիները առ այժմս ապրտ են մնացել ընտելութեան այդ պատահարներից: Հին գինին եթէ չը ծախվի, նորը տեղաւորելու տակաւնների նեղութիւն է լինելու, և պատճառ է դառնալու աւելի գինը ընկնելուն: Յարմար առիթը ձեռքից բաց չէ թողել մի հրէայ գինեւորացի, որ եկած է մեզ մօտ հարեան Հիւնդօրֆից, մեծ բանակութեամբ գինի թէն գնում է, սակայն գները դարձնալ մնում են ընկած:

Այս շարաթ պայմանութեան մի քանի դէպքեր եղան: Աւ. Նանասեանի այգում, բահի և դաշոյնի հարուածով սպանած են գտել մի խեղճ գանաւիկից մշակի: Կուրը ծագել է ջրի համար: Սպանութեան մէջ մեղադրվող Աւետիս Նանասեանը և իր այգեպանը ձերբակալված են: Միւս սպանութիւնը կատարվել է Խաչաւկայի հանրահոջակ Համբոյ ձեռքով:

Համբոյ ձորայի և աներկիւղ գողի հոջակ է վայելում, գիւղերից ինչքան անառնանք գողացվէր, պէտք է Համբոյի մասը մէջը լինէր: Բայց շատերը լուռն էին, երկիւղ կրեւոր, որ վրէժի կաննի Համբոյ: Համբոյ այդ գիւղի մտնում է կաթնալուծաւ մի խեղճ «Տաւալեցու տունը». ասն տիրոջ ծերունի կնոջը դաշոյնի մի հարուածով սպանել ու վերաւորել է օգնութեան հասնող փեսային ու կնոջը: ձայնի վրա դուրս են թափում բաղում ապուրդները, արձակում են բազում կապած գամբը շունը, վերջինս Համբոյի արգելում է փայտէ աստիճանով տան կտուրը բարձրանալու, եկող հասնողը մի քարի և փայտի հարուած հասցնելով, վրթալի Համբոյի տապալում են գետնին մեծ ի մահ: Համբոյի մօտ գտել են դաշոյն, սարձանակ և 76 փամփուշտ մօտ 50 հատ դանազան բանալի: Պատմում են, որ Համբոյ վեց անգամ փորձել է ատրճանակը կրակելու, բայց չէ բացվել: Համբոյ ձերբակալված է: Քննութիւնը շարունակվում է:

Սաչալապի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Թագաժառանգ Յեսարելի Ալեքսէյի ծննդեան առիթով թիֆլիս քաղաքն ամբողջապէս դարդարվել էր երէկ դրօշափնդով և լսվում էր եկեղեցիների զանգերի զողանջիւնը: Ներկայիս տեղի ունեցաւ հրավառութիւն:

Ներքին գործերի մինիստրութեան մէջ արդէն հարց է յարուցված Մոսկվայի յիշատակի, Կիւլիկի Օրդոնայի քաղաքային գումանկերում թոյլատրել ձայնաւորներ ընտրել ոչ միայն կալուածատէրերից, այլ և վարձու բնակարան ունեցողներից. ի հարկէ դրա համար կը տրվի տան վարձի որոշ չափ:

Վրաց գրագիտական ընկերութեան թմէնթ գիւղի (Թիֆլիսի նահանգ) դպրոցի ուսուցիչ պ. Աղաճէն կովկասեան շերամապահական կայարանն է ուղարկել իր ստացած շերամի բոժոժները: Պարոնը առաջին անգամ փորձ է արել թիֆլիսի նահանգի լեռնային մասերում շերամադահութիւնով պարագելու և ստացել է բաւական աճող հետեանք: Մերմեր ստացել էր այդ ուսուցիչը թիֆլիսի շերամապահական կայարանից: Երանի թէ այդ փորձը ծառայէր իր օրինակ Կովկասի լեռնային մասերի բնակիչներին և նրանց մէջ ապրող ինտելիգենտ անձերին: Միայն երկրագործութիւնով այլ ևս չէ կարելի բաւականութիւն տալ կեանքի աճող կարիքներին:

Կանանց ուսուցչական սեմինարիա: Միւրիսիւրից հաղորդում են «Варж. Вѣд.» լրագրին, որ այնտեղի քաղաքային խորհրդի վերջին նիստում վճռվեց Միւրիսիւրում հիմնել կանանց ուսուցչական սեմինարիա, ուր կարելի լինի պատրաստել այնպիսի վարժուհիներ, որոնք կարող լինեն վարել բոլոր ուսուցական պաշտօնները ոչ միայն Միւրիսիւրի նահանգում, այլ և բոլոր դպրոցի նահանգներում:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Մեր քաղաքն էլ աշխատում է գինիւղ մօտաւոր մօտանգի դէմ:

Մարտութիւնը, որ ամենագորից դէսն է աղէտի առաջն անհեղու համար, մասամբ ուշադրութեան է առնված. մեր նոր ոստիկանապետը հրամայեց բոլոր սրճարանատէրերին, որ եռացրած և ապա պաղացրած ջուր պահեն և ուղղորդեն տան խմելու. ամեն օր փողոցներն մաքրում են, բայց որովհետեւ փողոցներն ջրելու սովորութիւն չը կայ, դրա համար պէտք է տեսնել թէ ինչպէս ամպի նման փոշի է բարձրանում աւելելու ժամանակ: Աղքատներն անհոգեմբ կատարվում է նոյնպէս անկանօն. փողոցներից ժողոված կեղտերը հաւաքում են և դարձնալ քաղաքում.— Լորիս-Մելիքեան փողոցի ետքը «Տաւ-Բողազ» կոչված տեղում, ածում և կրակով վառում են, դա շատ փնասակար է, մեր կարծիքով աւելի լաւ կը լինի քաղաքից աւելի հեռու տանելը թէկուզ դարձնալ վառեն, կամ աւելի լաւ է լցնեն հօրերի մէջ և հողով ծածկեն: Շատ անխնամ են մնացել և քաղաքի արտաքիններն, որոնք փորված հորեր են և վրան մի փայտեայ տնակ դրված. բոլոր հօրերը լցվել են և դուրս են թափվում. և այդ պարագայութեան փորված է մի ուրիշը. և այսպէս մի քանի տանեակ հօրեր: Զարմանալի է ինչպէս չեն բողոքում այս մասին ձեռնառ մարդիկ:

ՄԱՆԳԼԻՍԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 23-ին, պ. Միւրիսիւրի պարզի բոստանում սերունդների հետ ներկայացրեց «Զօնի փոխարէն գոն»: Պ. Միւրիսիւրի թող ներկայացրեց կազմակերպէր որբան Բէֆն է տալիս: Այդ նրա իրաւունքն է: Բայց ինչ որ պարտի իրաւունք չունի անհեղու, այդ՝ այն է, որ նա իրան թոյլ տուեց աֆիշաներում «հայ գրամատիքական արխաններ» ներկայացրած կոչել մի ներկայացրած, որին բացի իրանից ոչ մի դերասան չէր մասնակցում:

ԲԵԼԻ-ԿԼԻՍԻՑ մեզ գրում են. «Բէլի-Կլիւս կամ Աղբուղը, ինչպէս գիտեն շատերը, նըշանաւոր է իր սառը ջրերով, որ ունեն կրային բաղադրութիւն և հրաշալի շրջականերով ու տեսարաններով: Եւ դրա համար էլ այստեղ ամբողջ եկողների թիւը պակաս չէ Մանգլիս կամ Կօշոր եկողների թիւից: Բացի վերոյիշյալ հանգամանքներից՝ Աղ-Բուղը գինեւորական բանակատեղի լինելով, իր մէջ ունի մի այգի իր ամեն տեսակ յարմարութիւններով: Կան մի քանի տեսակ խաղիք, կայ մի դահլիճ, բուֆէտ: Ներքինները այստեղ աւելի մեծ գուարճութիւններ են գտնում, քան մի օր և իցե տեղ: Կայ և ընթերցարան, ուր ստացվում են աւելի քան 18 հրատարակութիւններ: Յուլիսի 12-ից սկսած եղանակները վատացան: Տեղում են շարունակ անձրևներ: Այս տարի ամառանոց եկողները այստեղ ընկնեն, համեմատած անցեալ տարվայ հետ: Այստեղի ցորենի բերքը բաւարարից ընչ պակաս է, իսկ պտուղ շատ քիչ կայ:

ԱՐԴՈՒՆԻՑ մեզ գրում են. «Յուլիսի սկզբից մինչև այդ, գիւղի ու ցորենի, երկրի ծածկված է թանձր ամպով: 25 օր է, միայն երկու օր արևի երես ենք տեսնել, բացի դրանից սաստիկ քամի և ցուրտ է, տարբութեան աստիճանը արև եղած ժամանակ 30-ի է բարձրանում, իսկ ամպածած ժամանակ իջնում է մինչև 13-ի: Օդի այս փոփոխութիւնը զանազան հիւանդութիւններ է առաջ բերում թէ մեծերի և թէ երեխաների մէջ: հետեւապէս փնտրվում են բուսականութիւնը և մրգեղները, գլխաւորապէս խաղողը: Հասակաւոր մարդիկ անգամ զարմանում են այս տարօրինակ եղանակի վրա, որպիսին իրանը չեն յիշում իրանց կեանքի ընթացքում:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Տեղիս հրատարակութիւնը մինչ է ժողովրդին մաքուր ջուր մատակարարել: Այդ հարցը պարբերաբար կրկնվում է ամեն ամառ, երբ շորերը ստիպում են յաճախ յագեցնել ծառաւ: Գետի ջուրը ուղղակի անպէտք է խմելու, որովհետև թէ անմաքուր է և թէ պարունակում է քիչապար սպղմեր: Ճիշտ է, մի սարնրակ պարիւր էլ ունենք, բայց շատ հեռու է քաղաքի կենտրոնից և այն էլ սարի համարեա գաղաթիւն: պարզ է, ուրեմն, որ նա, ընդհանրապէս, անպարտաւոր է: Եւ ի՞նչ է նշանակում, ասացէք խնդրեմ, քաղաքը փող ունի, բայց ժողովուրդը չի կարող մաքուր, սառն ջուր խմել:

